

«Հ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 38/4

6 օգոստոսի 2013 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արսեն Հարությունյանի վարչական բողոքը «Հ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ 17.05.2013 թ-ի թիվ 2121979 ստուգման ակտի դեմ:

Ա/Ձ Արսեն Հարությունյանի վարչական բողոքում մասնավորապես նշված է.

Վարչական մարմինը ստուգման ընթացքում խախտումների հայտնաբերման դեպքում օրենքի ուժով պարտավոր է դրանք արձանագրել ստուգման ակտում: Միայն նշված պահանջի պահպանման արդյունքում է հնարավոր ՀԴՄ-ների գրանցման կարգի կամ շահագործման կանոնների խախտման համար կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը ենթարկել պատասխանատվության:

Վիճարկվող ակտում նշված է. «հիմք ընդունելով Էրեբունու ՀՏ պետի 03.05.2013 թ-ի թիվ 2214479 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրման արդյունքում 16.05.13 թ-ին կամզված արձանագրությունը, որով արձանագրվել է ՀԴՄ շահագործման կանոնների 19 կետի խախտման փաստը, ղեկավարվելով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» «Հ օրենքի 10 հոդվածով և 11 հոդվածի 2-րդ կետով առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով»:

Ակնհայտ է, որ ակտի մեջ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի պահանջները չեն պահպանվել, այլ միայն հղում է արվել 16.05.2013 թ-ին կազմված արձանագրությանը, որի մեջ նկարագրված փաստերն ամբողջությամբ խեղաթյուրված են:

Ակտի մեջ նշված է «17.05.2013 թ-ից մինչև 17.05.2013 թ-ը կատարեցինք ՀԴՄ-ի կիրառման ճշտության ստուգում»: Նշվածն իրականությանը չի համապատասխանում և 17.05.2013 թ-ին որևէ տեսուչ որևէ գործողություն չի կատարել, այդ օրը Արսեն Հարությունյանի խանութում որևէ ստուգում չի կատարվել:

Սույն բողոքը չենք ներկայացնում հենց այնպես կամ ժամանակ շահելու համար: Մենք տեսուչներին նույնպես հայտնել ենք, որ եթե իրականում կանխիկ գումարը ՀԴՄ-ում չմուտքագրվելու դեպք հայտնաբերեն, թող տուգանեն և մենք չենք վիճարկի: Սակայն հենց այնպես առանց խախտման փաստի մենք որևէ տուգանք չենք վճարելու: Իրականում ստուգում կամ հսկիչ գնում կոչվածը կատարվել է հետևյալ կերպ.

Ժամը 12:15-ի սահմաններում անհայտ անձ Արսեն Հարությունյանի խանութին կից վայրում գառան միս վաճառող քաղաքացուց գնվել է 2 կգ գառան միս, որի հետ Արսեն Հարությունյանը կապ չունի, քանի որ ամեն տեսակի միս չի վաճառում: Մի քանի րոպե հետո կրկին անհայտ անձ արդեն Արսեն Հարությունյանի խանութից կատարել է առևտուր, որի հասույթը՝ 6500 դրամը, մուտքագրվել է ՀԴՄ:

Նշված անձը չսպասելով ՀԴՄ կտրոնը ստանալուն հեռացել է: Վայրկյաններ անց մոտեցել են հարկային տեսուչները և հայտնել, որ քիչ առաջ կատարվել է հսկիչ գնում, ՀԴՄ կտրոնը չի տրամադրվել: Խանութի աշխատակից Հակոբ Հակոբյանը ներկայացրել է ՀԴՄ կտրոնը, որից երևում է, որ 6500 դրամը մուտքագրված է ՀԴՄ: Տեսուչները հանել են ժապավենը, սակայն արձանագրության մեջ դա ներկայացրել են լրիվ խեղաթյուրված ձևով, հետևյալ կերպ. «16.05.2013 թ-ին ժամը 12:15-ին Խորենացի 48 հասցեում գործող Արսեն Հարությունյան ԱՁ-ին պատկանող խանութից կատարեցինք հսկիչ գնում 6500 դրամ արժողությամբ 2 կգ միս, որի դիմաց վճարված կանխիկ գումարը չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Իրենց կողմից ներկայացվել են վկայականները և հանձնարարագիրը: Այնուհետև 12:19-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Հ» հաշվետվությունը, որում հասույթը կազմում էր 0 դրամ և իբր իրենց պահանջով 6500 դրամը ժամը 12:19-ին մուտքագրվեց ՀԴՄ: Ժամը 12:20-ին նորից դուրս բերվեց «Հ» հաշվետվությունը 6500 դրամ հասույթով»:

Էրեբունու ՀՏ տեսուչների գործողություններն իրավաչափ չեն, նրանք կոպտորեն խախտել են հսկիչ գնման ընթացակարգը և նշված իրավահարաբերությունը կարգավորող բոլոր հնարավոր

օրենքներն ու այլ իրավական ակտերը: Մասնավորապես, ակտի նախագիծը և ակտը կազմվել են նույն օրը, որով Արսեն Հարությունյանին զրկել են ակտի նախագծի վերաբերյալ իր առարկությունները ներկայացնելու հնարավորությունից:

Բացի այդ, խախտվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ի 1.4 կետի և 1.6 կետի պահանջները: Մասնավորապես՝ Արսեն Հարությունյանին հանձնարարագիր չի տրվել, եթե տրվեր, ինքը կգրեր, որ հրաժարվում է ստանալուց: Չի տրվել նաև արձանագրության օրինակը, հավանաբար այն պատճառով, որ արձանագրությունը փոստով ստանալուց հետո միայն տեսանք, որ որպես հսկիչ գնում կատարած անձինք նշված են ակտը կազմող տեսուչները, որն իրականությանը ինչպես նշեցինք չի համապատասխանում: Կայացված վարչական ակտից, վարչական վարույթի նյութերից պարզ չէ այն հանգամանքը, թե ով է եղել հսկիչ գնում կատարող անձը: Մի բան միանշանակ է, որ հանձնարարագրում նշված անձինք հսկիչ գնում չեն կատարել:

Տեսուչները խախտել են «Կառավարության որոշմամբ հաստատված «Հսկիչ գնումների ֆինանսական աղբյուրների և ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգ»-ի պահանջները և հսկիչ գնման արդյունքում ձեռքբերված ապրանքը հետ ընդունելու մասին ակտ չի կազմվել:

Բացի այդ, ինչպես ակտի նախագծի մեջ, այնպես էլ ակտի մեջ նշված է, թե իբր Արսեն Հարությունյանը հրաժարվել է ստանալ դրանք, սակայն դա իրականությանը չի համապատասխանում, քանզի 17.05.2013 թ-ին ոչ ոք ակտի նախագիծը կամ ակտը չի փորձել հանձնել ինձ: Այսինքն, կեղծ տվյալներ են ներկայացվել վարչական ակտի մեջ, որը նույնպես անվավերության հիմք է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի դրույթները Ա/Ձ Արսեն Հարությունյանը խնդրում է 17.05.2013 թ-ի թիվ 2121979 ակտը վերացնել /ճանաչել անվավեր/:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ստուգման ակտը կազմած անձանց ներկայացրած փաստաթղթերը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ պետի 03.05.2013 թ-ի թիվ 2214479 հանձնարարագրի Ա/Ձ Արսեն Հարությունյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 16.05.2013 թ-ի թիվ 2214479 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն):

Ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ գլխավոր հարկային տեսուչ Ժորա Աստվածատյանը 16.05.2013 թ-ին ժամը 12:15-ին ք.Երևան, Խորենացի 48 հասցեում գործող Ա/Ձ Արսեն Հարությունյանին պատկանող խանութից կատարել է 6500 դրամի հսկիչ գնում՝ գնվել է 2 կգ միս: Սակայն, գնված ապրանքի դիմաց վճարված կանխիկ գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ա/Ձ Արսեն Հարությունյանին ներկայացվել են ծառայողական վկայականները և հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 12:19-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել ՀՀ հաշվետվությունը, որում հասույթը կազմում էր 0 դրամ և ուսումնասիրությունն իրականացրած անձանց պահանջով չմուտքագրված 6500 դրամը ժամը 12:19-ին մուտքագրվել է ՀԴՄ: Ժամը 12:20-ին նորից դուրս է բերվել ՀՀ հաշվետվությունը 6500 դրամ հասույթով:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ա/Ձ Արսեն Հարությունյանը խախտել է ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հիմք ընդունելով վերոգրյալը էրեբունու ՀՏ պետի կողմից 17.05.2013 թ-ին հրապարակվել է թիվ 2121979 հանձնարարագիրը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում կատարելու վերաբերյալ: Արդյունքում 17.05.2013 թ-ին կազմվել է թիվ 2121979 ակտի նախագիծը, իսկ 24.05.2013 թ-ին՝ թիվ 2121979 ակտը, որով հիմք ընդունելով հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 16.05.2013 թ-ի թիվ 2214479 արձանագրության տվյալները, կիրառվել

է «Տսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամի չափով:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 03.05.2013 թ-ի թիվ 2214479 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Արսեն Հարությունյանի մոտ իրականացված հսկիչ գնմամբ, ինչպես նաև վերջինիս հաջորդող համապատասխան գործողություններով հիմնավորվել է Ա/Ձ Արսեն Հարությունյանի կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները խախտելու հանգամանքը, ինչը և հիմք է հանդիսացել ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ 17.05.2013 թ-ի թիվ 2121979 ստուգման ակտով «Տսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուգանքը կիրառելու համար:

Ինչ վերաբերվում է վարչական բողոքում նշված այն պնդմանը, որ ստուգման ակտի նախագիծը և ստուգման ակտը կազմվել են նույն օրը, այն է՝ 17.05.2013 թ-ին, ապա այն չի համապատասխանում իրականությանը: Ստուգման ակտն իրականում կազմվել է 24.05.2013 թ-ին, սակայն ստուգման ակտի կազմման ընթացքում թույլ է տրվել տեխնիկական վրիպակ, որի հետևանքով ստուգման ակտի կազմման ամսաթիվը 24.05.2013 թ-ի փոխարեն նշվել է 17.05.2013 թ-ը: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի թիվ 3342 գրությունում, որով Ա/Ձ Արսեն Հարությունյանին է ուղարկվել ստուգման ակտի օրինակը, նշված է, որ ուղարկվում է 24.05.2013 թ-ին կազմված թիվ 2121979 ակտի օրինակը:

Հանձնաժողովի 12.07.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը, վարչական բողոքը և վերջինիս առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է բացասական եզրակացություն:

Հանձնաժողովը, վերանայելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով Գանգատարկման խորհրդի եզրակացությունը գտնում է, որ Ա/Ձ Արսեն Հարությունյանի վարչական բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո թ ո շ ու մ է՝**

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ 17.05.2013 թ-ի թիվ 2121979 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ



Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ